# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն Գիւտ Խաչի», Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի ուսանողները, վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոսի գլխավորությամբ, երեկոյան ժամը 6-ին մեկնեցին Երևան, Արվեստի աշխատողների տանը դիտելու համար ռումինահայ հայտնի նկարիչ Հրանտ Ավագյանի նկարչական ցուցահանդեսը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռում նշվեց Մոսկվայի հայոց եկեղեցու ծխատեր արժանապատիվ Տ. Խաչատուր ավագ քահանա Տեր-Հարությունյանի ծննդյան 85-ամյակը։ Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով ծերունազարդ հոբելյարին՝ մաղթեց առողջություն և երկար կյանք։

Մայր Աթոռի միաբանները ևս ջերմորեն շնորհավորեցին ծերունազարդ հոբելյարի ծննդյան 85-ամյակը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռից Բուխարեստ մեկնեց ռումինահայ հայտնի նկարիչ Հրանտ Ավագյանը, որը Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը թեմական գործերով ժամանեց Մայր Աթոռ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռից Մոսկվա մեկնեց Մայր Տաճարի ավագ լուսարար հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաջիրյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մոսկվա, ռուսական Զագորսկ վանքը մեկնեցին բարեշնորհ Կարապետ սարկավագ Բենլիյանը, Պետրոս սարկավագ Պերպերյանը և Հակոբ սարկավագ Պոզապալյանը, 6 ամիս ժամկետով։ Մայր Աթոռի սարկավագները

կհմտանան ռուսաց լեզվին, կծանոթանան Ռուս Եկեղեցու պատմության, աստվածաբանության և ծիսակատարության։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Միլանոյից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Օշականի եկեղեցու վերանորոգման բարերար Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրները։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ընծայումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Հարությունն վարդապետ Մատենճյանը։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարեց Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց հոգեհանգիստ Մայր Աթոռի բարերարներ, միլանոյաբնակ Թորգոմ և Հայկ Ղազարոսյան եղբայրների հանգուցյալ ծնողների հիշատակին։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ ժամանեց ականավոր արևելագետ, Բուխարեստի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Վլատ Բենեցեանուն։